

ԲՈՒՆԻԱԹ ՍԵՐԱՍՏԱՑՈՒ ԳԻՏԱ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայ բժշկագիտության ասպարեզում XVII դ. բժիշկ Բունիաթ Սեբաստացու երախտավոր գործունեության մի կարևոր բնագավառն է նրա խմբագրական գործունեությունը, մասնավորապես Ամիրգովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկասիրության խմբագրումը¹։ Ինչպես հայտնի է, Ամիրգովլաթի մեծարժեք այդ աշխատությունը դարեր շարունակ (ընդհուպ մինչև XIX դ.) ուղեցույց է հանդիսացել հայ բժիշկների համար։ Ամիրգովլաթի բժշկարանի մեզ հասած ընդօրինակությունների մեջ առկա են չխմբագրված և խմբագրված տարբերակներ։ Խմբագրված ձևագիր օրինակներում հավաստի վկայություններ կան, որ այդ աշխատանքը կատարել է Բունիաթ Սեբաստացին։

Հայ բանասիրության մեջ այդ մասին առաջին անգամ հիշատակում է Ղ. Հովնանյանը իր «Հետադոտությունք նախնյաց ուսմկորենի վրա» աշխատությունում։ Ամիրգովլաթի «Օգուտ բժշկութեան» մեջ («Սքիայ» և «Շարայ» ախտերի բուժման հատվածում) նա նկատել է ուղղակիորեն Բունիաթ Սեբաստացու լրացումները²։

Բունիաթի խմբագրական գործունեությանը անդրադարձել է նաև բազմավաստակ բժշկապատմաբան Վ. Թորգոմյանը։ Նա տեղեկություններ է հաղորդում «Օգուտ բժշկութեան» գործի Բունիաթ Սեբաստացու խմբագրած երկու օրինակների մասին, որոնցից մեկը պահվել է Կ. Պոլսի Պալատի թաղիս. Հրեշտակապետաց եկեղեցում³, իսկ մյուսը՝ Վենետիկի Մխիթարյանների լատենադարանում⁴ (ձեռ. № 1285)։ Ի դեպ, այդ ձեռագրերում բացի Բունիաթի

¹ Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան Տումարի» աշխատության մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 8, էջ 94—105։

² Դրանք հետևյալներն են. 1. «Ես Բունիաթ բժիշկս Սեբաստացի այս ցաւու շատ եմ հանդիպերու Այս ցաւու ճանաչումն խիստ դժուար է։ Հասու բժիշկ լինի նայ, զայս ցաւս փարատելոյ կարող է։ Յիմ ժամանակս քանի մի մարդ դեղով փարատեցաք շնորհին Աստուծոյ։ Շատ կու լինի, որ լին ճանաչեր զցաւն, մեռաւ դէի, կու թաղեն»։ 2. «Զսալորին շարապն պասվայիճով տուր շատ աւուրք. խիստ օգտութիւն կանէ եւ կու տանի, եւ ի վերայ մոմըրովան օծէ ամէն դիմօք, զբնութիւնն լոյծ պահէ։ Ես բժիշկ Պունիաթս շատ եմ փորձեր եւ շատ եմ աշխատէր ի սայս» (Ղ. Հովնանյան, Հետադոտությունք նախնյաց ուսմկորենի վրա, մասն Բ, Վիեննա, 1897, էջ 489)։

³ «Օգուտ բժշկութեան» այս տարբերակում Ամիրգովլաթի հայտնի հիշատակարանից բացի կա նաև մի այլ հիշատակություն, որտեղից հայտնի է դառնում, որ բժշկարանը խմբագրված է մեկ ուրիշ բժիշկի՝ Բունիաթ Սեբաստացու կողմից. «Այլ և զվերջին աշխատողն սորա զՊունիաթ Սեբաստացի բժիշկն, որ բաղում բժշկութիւն կատարեցաւ շնորհին Աստուծոյ և այս պատուական զրոցս խիստ հաւանեցաք և զրել տուաք» («Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 108—112)։

⁴ «Բաղմավէպ», 1923, էջ 167։

խմբագիր լինելու փաստը հաստատող հիշատակարանից, կա նաև վկայություն խմբագրման ստույգ թվականի մասին⁵:

Ավելի ուշ, Ստ. Մալխասյանցի աշխատասիրությամբ հրատարակվում է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկասիրության բնագիրը՝ լուրթ ձեռագիր-բժշկարանների բաղադրությամբ: Անվանի բանասերն հիմք է բերում Մաշտոցի անվան Մատենադարանի № 414 ձեռագիր-բժշկարանը, որի նաև համեմատել է մնացած 6 ձեռագրերը: Պարզվել է, որ № 414 ձեռագրի մեջ կան առանձին հատվածներ, երբեմն էլ տողեր, որոնք բացակայում են մնացած վեց ձեռագրերում: Այդպիսիք շատ են մանավանդ մարդակազմության և ընդհանուր ախտաբանության բաժիններում: Զի կարելի ենթադրել, որ տարահիմք վեց ձեռագրերում կարող էին Ամիրդովլաթի տեքստից օտարվել նույնական հատվածներ: Բնականաբար Ստ. Մալխասյանցը եզրակացրել է, որ այդ հատվածները Ամիրդովլաթինը չեն, այլ հետագա ընդմիջարկություն են՝ կատարված Բունիաթ Սերաստացու ձեռքով: Այդ իսկ պատճառով Ստ. Մալխասյանցը «Օգուտ բժշկութեան» գրքի վերնագրի տակ ավելացրել է՝ «բժշկ Պունիաթ Սերաստացու խմբագրած», «...որպեսզի մի կողմից Ամիրդովլաթը չճանաչվի հեղինակ և պատասխանատու այն հատվածների, որ յուր գրածները չեն, և մյուս կողմից՝ անհետ չկորչի անունը Պունիաթ բժշկի, որ շատ աշխատանք է թափել այս գրքի վրա»⁶: Իսկ որ № 414 ձեռագիր-բժշկարանը խմբագրված է Բունիաթ Սերաստացու կողմից վկայում է նաև Բունիաթի հիշատակարանը, որն Ամիրդովլաթի հիշատակարանի անմիջական շարունակությունն է: «Այլև զվերջին զաշխատողն սորայ. զՊունիաթ Սերաստացին, որ բազում աշխատանք կրեցաք ի յայս արուեստս և բազում բժշկութիւն կատարեցաւ շնորհիւն Աստուծոյ, և այս պատուական գրոցս խիստ հաւանեցաք և գրել տվաք ձեռամբ Կարապետ մանկանն ի թվակսնութեանս Հայոց Ռէն (1626) ամին և քաղաքն ի Մարզուան»⁸:

Ի վերջո, «Օգուտ բժշկութեան» № 414 ձեռագրի «Գիրք բժշկութեան Տունմարի» բաժնի տարբեր ախտահարումների բուժման ձևերի մեջ բազմիցս գտնում ենք Բունիաթի անմիջական հիշատակումներն այդ մասին՝ «Եւ ես Բունիաթ բժիշկս շատ եմ փորձել և շատ եմ աշխատել ի սա»:

Մեր ուսումնասիրության համար հիմք է ծառայել Բունիաթ Սերաստացու խմբագրած № 414 «Օգուտ բժշկութեան» ձեռագիր-բժշկարանը, որի հետ համեմատվել են Մաշտոցի անվան Մատենադարանի նույն աշխատության խմբագրված № 5275, 7752, 5847, 8871, 8052, 10288, 9844 օրինակները: Նշված գրչագրերից ընտրելագույնն է համարվել № 7752 ձեռագիր-բժշկարանը:

Ամիրդովլաթի մոտ կազմախոսության և բանախոսության հարցերը մեկնաբանվում են գիտական ավելի բարձր մակարդակով, քան նրա նախորդ հեղինակների (Աբուսայիդ և այլք) մարդակազմության վերաբերյալ գործերում:

Միջնադարյան Հայաստանում մարդակազմության զարգացման որոշակի մակարդակի մասին է խոսում այն փաստը, որ գիտության այս բնագավառի

⁵ Նույն տեղում, էջ 168:

⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբագրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան. 1949, էջ ԻԶ—ԻԷ:

⁷ Նույն տեղում, էջ ԻԸ:

⁸ Ձեռ. № 414, ք. 221ա:

վերաբերյալ աշխատանքներ են գրվել նույնիսկ բժշկագիտության հետ անմիջական կապ չունեցող անձանց կողմից (Ներսես Լամբրոնացի, Գրիգոր Տաթևացի)⁹, Դավար է գտնել ընդհանուր ախտաբանության հարցերին նվիրված ունի բժշկարան, որտեղ մի բաժին («Վասն կազմութեան մարդոյ» կամ «Յաղագս բնութեան մարդոյ» վերնագրերով) հատկացված չլինի մարդակազմությանը, Եվ շնայած այն բանին, որ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքի կազմախոսությանը նվիրված բաժինը աչքի է ընկնում իր գիտական որոշակի մակարդակով, այսուհանդերձ Բունիաթ Սեբաստացին այն լրացրել է մի նոր՝ «Եւ մարդակազմութիւն մի այլ գրոցն» հավելումով, որի հիմնական աղբյուրն է եղել XII դ. Կիլիկյան Հայաստանում ապրած և ստեղծագործած ասորի բժիշկ Աբուսայիդի «Մարդակազմությունը»¹⁰, Աբուսայիդի վերոհիշյալ գործը XVII դ. խմբագրվել է սեբաստացի մեկ այլ բժշկի՝ Ասար Սեբաստացու կողմից, Այդ գիտական խմբագրման նշանակությունը առավել ևս մեծանում է նրանով, որ միայն այդտեղ է պահպանվել աչքի կազմության վերաբերյալ Հերացու անհայտ աշխատության պատահիկը, Այսպիսով, սեբաստացի բժիշկների կողմից նախորդ դարերի բժշկագիտական գործերի խմբագրումները, ամենայն իրավամբ, հիմք են տալիս ասելու, որ XVI—XVII դդ. Սեբաստայում, ի դեմս Հովասափ, Ասար և Բունիաթ Սեբաստացիների, գործել է հմուտ բժիշկների մի խումբ, որը մեծ աշխատանք է կատարել հայ բժշկագիտության հին արժեքների խմբագրման, բազմացման և գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ, Այս առիթով հիշենք, որ դեռևս XI—XII դդ. Արևմտյան Եվրոպայի հանրահռչակ Սալերնոյի դպրոցի բժիշկներից շատերը (մասնավորապես Կոնստանտին Աֆրիկացին) հունական, բյուզանդական և արաբական բժշկագիտության դասականների աշխատությունների խմբագրմամբ և վերամշակմամբ ստեղծում էին բժշկագիտական ձեռնարկներ, որոնք դարեր շարունակ կիրառվում էին Արևմտյան Եվրոպայի տարբեր բժշկական դպրոցներում¹¹:

Ինչպես նշեցինք, Բունիաթ Սեբաստացին Ամիրդովլաթի «Ուսումն բժշկություն» բաժնում ավելացրել է. «Եւ մարդակազմութիւն մի այլ գրոցն» սկզբածքով ընդարձակ հատվածով, Այդ հավելվածի և Աբուսայիդի «Մարդակազմության» համապատասխան հատվածների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ բազմաթիվ ընդհանրությունների հետ միասին այստեղ առկա են նաև զգալի տարբերություններ, Օրինակ, վերոհիշյալ երկու աշխատանքների «Վասն ստեղծման բերանոյն և ատամանցն» մասերը համեմատելիս պարզվում է, որ Աբուսայիդի աշխատության վերը նշված զխումբ բացակայում է հետևյալ հատվածը.

«...Ասաց Արիստոտել, թէ հարամ արիւնն ի մարդն և ի վաւարն, որ է փայծաղն է: Ասէ Ապումաշարն, թէ հարամն փայծեղն է և հաւալն լերդն: Եւ ի կովտան այլ հարամ արիւն կայ. այնոր համար որ զդանակն մամիլ կասեն, որ երբ կու մորթեն՝ նա հարամն կու երթայ և հաւալն կու մնայ: Վասն այնոր համար զփայծէղն կու ձգեն որ հարամէ:

⁹ Լ. Ա. Օգանեսյան, История медицины в Армении, Ереван, 1946. ч. III, стр. 121.

¹⁰ Աբուսայիդ, Ցաղագս կազմութեան մարդոյ, աշխատախրոթյամբ Ս. Ա. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 11:

¹¹ Т. Мейер-Штейнер и К. Зудгоф, История медицины, М., 1925, էջ 176—191.

Նւ խաբարէջ մաղձս և սև մաղձն և պալղամն ի յայնկից կու լինայ, որ շուտ քնանայ. քանզի լնդն տանուտէր է, որ բաժանէ զամէն կերակուր, յայնժամ ի յիր վրա մնայ և չկարէ բաժանիլ. յայնժամ ի ջերմութենէն գոլողիկ կերակրոյն ի գլուխն վերանայ, որպէս ծուխ երդեցն տանն, և զգայութիւնսն խնու, որպէս ծուխ զծակսն ընդ որ լոյսն մտանէ և առնէ մութն տանն: Եւ որ բաժին որ ի կերակրոյն չառնու՝ վնասի, որպէս պոստան մի, որ անշուր մնայ:

... Նմանութիւն. թոքն որպէս զօրէն փքոյ դարբնի զօդն յինքն քաշէ և ընդ խռչակն աւտաքս պրկէ: Զի բերանն որպէս փանդեռն է, և օդն որպէս ղաղիսն, ղանկիկն իբրև զէշն, լեզուն որպէս կտնդոց, ատամունքն որպէս զաղէպատ, և շրթունքն որպէս մատունք, որ խաղայ ի վերայ աղէպատին, յօղաւորէ զձայնն և յօրինէ զտանն: Եւ առաջին ատամունքն այլ պիտոյ են խօսիցն. որ ըղորդ դրուցեն»¹²,

«Եւ մարդակազմութիւն մի այլ գրոցն» հավելման մեջ Բունիաթ Սեբաստացին անդրադառնում է նաև ներքին օրգանների կազմախոսության, նյարդային և ոսկրային համակարգերի, ինչպես նաև զգայարանների կառուցվածքային հարցերին: Այս օրգանների բնախոսության վերաբերող հարցերը հիմնականում քննարկվում են հումորալ ախտաբանության տեսանկյունից, իսկ կազմախոսությունը ներկայացված է ըստ անտիկ բժշկագիտության մեծ հեղինակությունների՝ Հիպոկրատի, Արիստոտելի, Գալենի:

Բունիաթ Սեբաստացի բժիշկ-խմբագրի վարպետությունը և դիտողականությունը հատկապես ի հայտ են գալիս «Օգուտ բժշկութեան» երկասիրության երկրորդ մասը՝ «Գիրք բժշկութեան տումարի» խորագրով բուն բժշկարանը խմբագրելիս: Այստեղ է, որ նա կարողացել է գործնական բնույթի բազմաթիվ արժեքավոր լրացումներ կատարել:

«Օգուտ բժշկութեան» գործի Բունիաթի խմբագրած օրինակի (Մատենադարանի № 414 ձեռագիր-բժշկարան) մեջ առկա հավելումները կարելի է բաժանել 3 խմբի՝ առաջին խմբի մեջ են մտնում իր անվանական լրացումները հիվանդությունների բուժման և ախտանշանների նկարագրության բաժիններում, երկրորդի մեջ՝ ուրիշ հեղինակներից կատարած մեջբերումները, իսկ երրորդի մեջ՝ աղբյուրագիտական ճշտումները:

Մեզ համար, անտարակույս, առավել կարևոր էն Բունիաթ Սեբաստացու անվամբ կատարված լրացումները: Բժշկարանի «Բարակ քար և աւազն, որ ի լերիկամն շնծայի մարդուն այս է» գլխում Ամիրդովլաթ Ամասիացին հանդամանորեն նկարագրում է երիկամաքարային հիվանդությունը և առաջարկում այդ ախտահարման բուժման թե՛ ներքին, թե՛ արտաքին օգտագործման տարբեր դեղամիջոցներ: Բունիաթ Սեբաստացին այդ ախտահարման բուժման համար առաջարկում է իր բժշկական պրակտիկայում կիրառած և դրական արդյունք տված մի նոր դեղամիջոց: Ահա այն. «Ես պակասաւոր Բունիաթ բժիշկս, քան զախրապ մաճունին լաւ դեղ չի գտայ այս ցաւուս. խիարի, սեխի, դդմի կտի ջրով եփէ, որ շորսէն մեկն մնայ, տուր խմէ, հալէ զքարն Աստուծով»¹³:

Բունիաթը մի ուրիշ դեղամիջոց էլ առաջարկում է միզուղիների տարբեր հատվածների բորբոքային ախտահարումների հետ կապված արյունամիզու-

¹² Ձեռ. № 414, Բ. 236բ—239ա:

¹³ Ձեռ. № 414, Բ. 327ա:

թյան բուժման համար: Նրա ուշադրությունից չեն վրիպել երիկամների և միզուղիների տարբեր հատվածների բորբոքային ախտահարումների ժամանակ մեզի ֆիզիկական հատկությունների փոփոխությունները (գունափոխություն՝ կամ մսաչրի նման, կամ արյան գույնի, նեխած հոտ, նստվածք և այլն): Հիվանդագին այսպիսի վիճակների դեպքում, լրացնելով Ամիրդովլաթ Ամասիացուն, Բունիաթն առաջարկում է հետևյալ դեղատեսակը. «Եւ այլ բան կայ գրելու Սֆուֆս ի բան տուր խիստ լաւ է: Առ պալլուտ, մուռի սաֆի, սօտ, աստախօտոս Ժ. Ժ. (10-ական) դրամ, շաքար Կ. (60) դրամ, մեկ դրամէն մինչև յերկու գրամն տան, օգտէ: Արիւն շուշն դեղն այս է. հաւուճի հունդ մաճուն արայ տուր, օգտէ Աստուծով»¹⁴,

Բունիաթ Սեբաստացու անվամբ լրացում կա նաև «Օգուտ բժշկութեան» աշխատության «Ղուպայ և թուսայ և շիրինայ, որ տաճիկն շարայ ասէ» դրված: «Ղուպայ և թուսայ» (herpes) և շիրինայ (Eczema humidum) հիվանդությունները մաշկի տարբեր բնույթի ախտահարումներ են, որոնց պատճառագիտությունը Ամիրդովլաթի կողմից մեկնաբանվում է ըստ հեղափոխյալին ախտաբանության ուսմունքի, իսկ ախտանշանաբանությունը և բուժումը ներկայացված է ըստ արաբական բժշկագիտության հայտնի մահճաբույժների՝ Մասնհի, Հունանի, Սապիթ-Կուռանի: Բժշկարանի այս գլխում Բունիաթի ավելացրած առավել ուշագրավ հատվածը հետևյալն է. «Ասեր է գրոցս շինօղն, թէ առ ղիսարտալն և ծեծէ, և երբ մարդն ի բաղնեցէն ելնէ և շփէ զտեղին հաստ քթանով մինչև արունի, յետոյ զծեծած դեղն ի վերան օծէ, զի որ շատ դեղին ջուր հանէ և աղատի. փորձած է: Դեղ մի այլ խիստ լաւ է.— Ժանկառ, նշատիր, պօրա հայոց. հին յեղ յիրար խառնէ որպէս մորհամ և օծէ ի տեղին. խիստ շատ օգտութիւն կանէ և կու տանի, և ի վերայ մոմըրովան օծէ. ամէն դիմօք զբնութիւնն լոյծ պահէ: Եւ ես բժիշկ Բունիաթս շատ եմ փորձել և շատ եմ աշխատել ի սա»¹⁵,

Այս հատվածի առաջին դեղամիջոցը, ինչպես նշում է Բունիաթը (ասեր է գրոցս շինօղն), վերցված է հենց իրենից՝ Ամիրդովլաթից: Իրոք, վերջինիս «Անգիտաց անպէտ» դեղաբառարանի 1089 թվահամարի տակ մենք գտնում ենք «նարտալ» դեղամիջոցի նկարագրությունը, որ, ի թիվս այդ բուժամիջոցի այլ կիրառումների, նա առաջարկում է այն օգտագործել նաև մաշկային հիվանդությունների ժամանակ¹⁶: Ի դեպ, սա կիրառելի մեթոդ է խմբագիր Բունիաթ Սեբաստացու համար՝ խմբագրվող բժշկարանը ավելի ընդգրկուն, լիարժեք դարձնելու նպատակով օգտագործել նաև նույն հեղինակի՝ Ամիրդովլաթի, այլ աշխատությունները: Հավելվածի երկրորդ դեղամիջոցն արդեն հենց իր՝ Բունիաթ Սեբաստացու, թերևս սեփական պրակտիկայում կիրառած, բուժամիջոցն է: Ուշագրավ է, որ այս դեղամիջոցի մեջ նա օգտագործել է հայկական բորակ (crysocolla, borax) հանքային ծագում ունեցող մի դեղամիջոց, որի դրական ներգործությունը տարբեր հիվանդությունների բուժման ժամանակ հայտնի է եղել Հայաստանում դեռ հնագույն ժամանակներից և բլ հավանական կավի (Bolus armena), կապույտ քարի (Petra armena) և

¹⁴ Ձեռ. № 414, ք. 327բ:

¹⁵ Ձեռ. № 414, ք. 344բ:

¹⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 209.

ammonium-ի հետ միասին, որպես լալն ճանաչում գտած դեղամիջոց, արա-
սահանվել է արտաքին շուկա¹⁷:

Արժեքավոր են Բուժիական Սեբաստացու խմբագրական հավելումները նաև
մաշկային մեկ այլ հիվանդության՝ բորի (lepra) բուժամիջոցները նկարա-
դրելիս: Հայկական բժշկական մատենագրության մեջ հաճախ կարելի է հան-
դիպել մաշկային այս ծանր հիվանդության կլինիկական նկարագրությանը:
Հնագույն ժամանակներից այս վարակիչ հիվանդությունը տարածվելով՝ հիմ-
նականում Առաջավոր Ասիայի երկրներից թափանցել է Հայաստան և առա-
ջացրել էնդեմիկ բռնկումներ: Այդ հիվանդության դեմ պայքարելու համար
Հայաստանում դեռ III դ. (260 թ.) գործում էին հատուկ բորոտանոցներ¹⁸.
IV դ. այդ ձեռնարկումները ավելի մեծ ծավալ են ընդունում¹⁹: Ավելին, Փոքր
Հայքում (Սեբաստիա, Կեսարիա) IV դ. հիվանդանոցներին կից կային առան-
ձին վարակիչ հիվանդությունների բաժանմունքներ՝ հմուտ բժշկական անձնա-
կազմով²⁰: Չնայած ձեռնարկված միջոցներին, Հայաստանում հետագայում
էլ, ժամանակ առ ժամանակ, արձանագրվում էին բորի էնդեմիկ բռնկում-
ներ: Բուժիական Սեբաստացին, հավանաբար, բուժել է այս ախտահարմամբ
տառուպող հիվանդների, որովհետև Ամիրզոլվաթի իր խմբագրած բժշկարանի
«Բոր, որ կամ դալար լինի եւ կամ չոր, եւ կամ քերվի խիստ» գլխում առա-
ջարկում է նոր բուժամիջոցներ, որոնք լավ ազդեցություն են ունեցել հիվանդ-
ների վրա. «Բորի գեղ. առ մէկ բաժին ֆարսի քուքուրտ, մէկ բաժին շորայ,
երեք բաժնէն մէկն նշատիր, բարակ սխկէ, քամած մածունով հապեր շինէ
փոքր սիսռան շաք՝ առաւոտն, իրիկունն մէկ, մէկ կով տայ»²¹: Մի ուրիշ դե-
ղամիջոց էլ, որի բաղադրության մեջ մտնում են սնդիկ, ժանկար, մկնդեղ.
Բուժիական խորհուրդ է տալիս բաղնիքում լողանալուց հետո քսել մաշկին:
Այսպիսի մի քանի բուժագործությունից հետո, ըստ Բուժիական, հիվանդներն
առողջանում են:

Բուժիական Սեբաստացին լինելով հմուտ մահճաբույժ, իր բուժական պրակ-
տիկայում մաշկային ախտահարումների ժամանակ օգտագործել է նաև արևի
ճառագայթների բարերար ազդեցությունը: Արևաբուժությունը (heliotherapia)
որպես բուժման արդյունավետ միջոց լայնորեն օգտագործել է նաև Ամիրզոլվ-
աթ Ամասիացին: Բուժիական էլ իր հերթին «Պիսակ» (viteligo) կոչվող հի-
վանդության ժամանակ խորհուրդ է տալիս մաշկի ախտաբանական փոփո-
խության ենթարկված հատվածներին քսել տարբեր դեղամիջոցների խոռ-
նուրդից ստացված դեղապատրաստուկը և այն զուգակցել արևաբուժությամբ.
«Առ ատրիլալի հունդ Ե. (5) դրամ, և սալախըլ հայեայ, որ է օձուն խորխն Ե.
(5) դրամ և սալասլի տերև Ե. (5) դրամ, զամենն ծծծէ և մաղէ և տուր Ե. (5),
և. (5) դրամ խաղողի գինով Ե. (5) օր որ խմէ, շատ օգտէ, բայց ի յամառն

17 Լ. Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն, Պատկերազարդում հայ բժշկության պատմության, Երևան,
1958, էջ 8:

18 Л. Оганесян, История медицины в Армении, ч. I, стр. 74.

19 365 թ. Ներսես Պարթևի ձեռնարկությամբ Աշտիշատի եկեղեցական ժողովը որոշում է
Հայաստանի զանազան կենտրոններում հիմնել բորոտանոցներ, հատուկ ապաստարաններ հաշ-
մանդամների և կույրերի համար («Փաստոսի Բուզանդացու Պատմություն հայոց», Վենետիկ,
1832, էջ 74—76):

20 Т. Межер-Штейнер и К. Зудгоф, նշվ. աշխ., էջ 149:

21 Ձեռ. № 414, Թ. 345ա:

աւուրքն լինի և խմելուն յետևի ի յարեն նստի մերկիկ այն շաիր, որ դիմանայ մարմինն՝ շատ օգտէ: Եւ թէ զքապարին կեղեն բարակ աղաս և բացիով օծես՝ իսպիտակ պահաղին շատ օգտէ»²²:

Ժամանակակից բժշկագիտությունն այսօր էլ մաշկի վրա առաջադատ պիղծման տարրերի հատվածների բուժման նպատակով լայնորեն օգտագործում է թե՛ արևի և թե՛ արհեստական ուլտրամանուշակագույն ճառագայթները:

Բուժիչ Սերաստացուն, անշուշտ, հայտնի է եղել ժանտախտի (Pestis) վարակիչ բնույթը: Նա որպես կանխարգելիչ միջոց առաջարկում է «մասր»²³ կոչվող բույսի տերևից պատրաստված դեղամիջոցը, որի ընդունման դեպքում «այս ցան ի յան չի գայ», իսկ եթե նույնիսկ վարակվեն՝ հիվանդին «զեն շանէ»: «Մասր քասեն (myrrhis) որ տերեն նման է դաղձի տերևին, և թուրքն այս խոտիս ձեռքոց դաղձ կասեն, եթե մէկ մարդ տայուն հանէ, և կամ այն տարին տայուն լինայ, թէ այս խոտէս Բ. (2), Գ. (3) տարպայ դինով կամ մուսալասով խմէ՝ այն տարին այս ցան չի գայ. և թե գայ՝ նա գլխի շանէ և խալսի կամօքն Աստուծոյ»²⁴: Բուժիչի ավելացրած այս դեղաբույսը 2098 թվահամարի տակ²⁵ նկարագրված է նաև Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» դեղաբառարանում, ուր խոսվում է նրա բուժիչ հատկությունների մասին կառաղության (rabies) և թոքի խոցային ախտահանումների ժամանակ:

«Օգուտ բժշկութեան» երկասիրության մեջ Բուժիչ Սերաստացին արժեքավոր հավելումներ է կատարել նաև աչքի տարբեր մասերի ախտաբանական փոփոխությունների՝ հատկապես կուպի, եղջերաթաղանթի և արցունքադեղձի ախտահարումների բուժման բաժիններում: Հատկապես հետաքրքրական է այն դեղատոմսը, որը ավելացված է. «Աչաց տեսութիւն, որ է պտուղն լաննայ և կամ նեղնայ» գլխում: Սերաստացին գրում է. «Աչքն որին ցեղ ցառուննայ, դու առ զայն քարն, որ ֆռանկի՝ պիէթրայ էմաթիթիս ասեն և կանտաս ալ կու ասեն: Ծեծէ, դիր ի փոթաքն, այրէ այնչափ, սպիթակագոյն լինի և ցանէ ի յաչքն: Այս է ֆլամենդու քաղաքէն էքաց է, ցացութ էր յեմա եւ Հովհաննէս բժիշկն լոյս բերի, որ օգտութիւն լինի մարդոյ Աստուծով»²⁶: Այս դեղատոմսը, Բուժիչի վկայությամբ, պատկանում է մեկ ուրիշ հայ բժշկի՝ Հովհաննէսի գրչին: Հովհաննէս անունով բժիշկ հայ մատենագրության մեջ հիշատակվում է և՛ IX դ.²⁷, որից մեզ որևէ բժշկարան չի հասել, և՛ որպես 1438 թ. գրված հայերեն հնագույն բժշկարաններից մեկի ուղարկատու²⁸:

²² Ձեռ. № 414, թ. 346բ:

²³ Մասր—Myrris—Գևասանք (տե՛ս Բ. Մատուրյան, Բույսերի անունների լատիներեն—հայերեն—ռուսերեն բառարան, Երևան, 1962, էջ 77):

²⁴ Ձեռ. № 414, թ. 352ա:

²⁵ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, էջ 358:

²⁶ Ձեռ. № 414, թ. 284ա:

²⁷ Պատասխանելով Ղ. Հովհաննյանի հարցումին, Ղ. Ալիշանը թվարկել է XII դ. առաջ իրեն հայտնի աշխարհական հայ հեղինակներին, դրանց մեջ նաև Հովհաննէս բժշկապետին, որն ապրել է IX դ. (Ղ. Հովհաննյան, նշվ. աշխ., էջ 44):

²⁸ Հայոց ՊՁԷ (1438) թվականին Հովհաննէս բժիշկը իր համար Աբրահամ արեղային ընդօրինակել է տալիս մի բժշկաբան, որը հետագայում փոփոխության է ենթարկվում՝ տեղ-տեղ համառոտելով, տեղ-տեղ էլ ընդարձակելով: Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող այդ բժշկարանի մեջ կա հետևյալ հիշատակարանը. «Ընդ նմին և զկազմել տվող Ղ. Հովհաննէս Հէքիմա եւ զհասն իւր զհանգուցեալն ի Քրիստոս՝ զվարպետ Սկանդարն յիշես»:

Ի դեպ, հայտնի է նաև, որ IX դ. ապրաթ շուկանները բժշկը Դիոնեսիոս Արիս-պագացու վարքը հունարենից թարգմանել է հայերեն²⁹։ Ցավոք, մեր ձեռքի տակ եղած տվյալները հնարավորություն չեն ընձեռում ստույգ պարզելու, թե այդ Լրկու բժիշկներից որին է ակնարկում Բունիաթ Սեբաստացին։

Տեսողական օրգանի ախտաբանական փոփոխությունների բուժման բաժնում Բունիաթն ունի այլ լրացումներ ևս։ Դրանցից առավել արժեքավորը, թերևս, կատարակտայի բուժման նրա դեղամիջոցն է, որի ազդեցությունն իր իսկ բնորոշմամբ, «խիստ գովելի է և թագաւորական»։ Նա գրում է. «Այլ ցեղ աչաց դեղ ընտիր, որ զմշուշն տանի, և ի սպիտակուց և զարինն և բուսաց միսն խափանէ։ Առ անծակ մարգարիտ, կաքվու լեղի և մուշք, պարապար աղա և աշքն դիր, խիստ գովելի է և թագաւորական»³⁰։

Այժմ անդրադառնանք «Օգուտ բժշկութեան» աշխատության «Որ կաւ ուտէ եւ կամ հող և կամ գործելի ի պատերուն» գլխում Բունիաթ բժշկի կատարած լրացմանը։ Այս ախտահարման (ռախիտ) պատճառները Ամիրդովլաթը բացատրում է հեղահյութային ախտաբանության ուսմունքի համաձայն, իսկ բուժման ձևերը շարադրված են ըստ Գալենի և Իբն-Մասավեյի (էհաննա) տեսակետների։ Ի լրացումն Ամիրդովլաթի, Բունիաթ Սեբաստացին առաջարկում է հետևյալ դեղամիջոցը. «Տղայ, որ հող ուտէ, զձկան լեղին ի հողն իւանէ և տուր որ ուտէ, կու կտրէ»³¹։ Ինչպես հայտնի է, բժշկագիտության մեջ ռախիտի պատճառների և ախտածնության գիտական բնորոշումը տրվեց միայն XX դ. սկզբներին, երբ գիտնականներին հաջողվեց պարզել, որ մտնական հասակի այդ հիվանդությունը առաջանում է այն դեպքում, երբ արյան մեջ խախտվում է կալցիումի և ֆոսֆորի փոխհարաբերությունը։ Հետագայում հայտնի դարձավ, որ այս հիվանդությամբ տառապող երեխաների վրա բուժիչ մեծ ազդեցություն են ունենում ձկնամթերքները, հատկապես ձկան յուղը՝ շնորհիվ իր մեջ պարունակվող հակառախիտային vit «D»-ի։ Իսկ vit «D» հիմնականում գտնվում է ձկնկթի և ձկան լյարդի մեջ³²։ Այստեղից ակնհայտ է, թե որքան արժեքավոր է Բունիաթ Սեբաստացու առաջարկած դեղամիջոցի պրակտիկ նշանակությունը։

Իր երկարամյա բժշկական գործունեության ընթացքում Բունիաթ Սեբաստացին, բնականաբար, հանդիպել է նաև մարսողական օրգանների ախտահարումներով տառապող հիվանդների և նրանց բուժումը կազմակերպել է հաշվի առնելով թե՛ սուբյեկտիվ (անամնեստիկ), և թե՛ օբյեկտիվ (մաշկի գույնի փոփոխություն, հյուսվածություն, լյարդի և փայծաղի նորմալ չափերի շեղումներ, այտուցվածություն և այլն) հետազոտման տվյալները։ Ամիրդովլաթի բժշկարանի Բունիաթի խմբագրումներից ուշագրավ է այդ օրգանների ախտաբանական շեղումներին վերաբերող ներքոհիշյալ լրացումը, որը նա կատարել է «Որոյ լերդն

շիր, կազմեցաւ ի թուին Հայոց ՊՁԷ (1438)»։ Այդ նույն ձեռագրի լուսանցքում հիշատակություն կա այն մասին, որ շուկի հայրը նույնպես բժիշկ է եղել. «Աստուած ողորմայ Սկանդարին հոգուն՝ հաքիմինն» (Լ. Ս. Խաչիկյան, Ժն գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, մասն I, էջ 487)։

29 Գ. Զարբհանյան, Պատմություն հայերեն դպրությանց, Վենետիկ, 1865, էջ 427։

30 Ձեռ. № 414, ք. 277ա։

31 Ձեռ. № 414, ք. 308ա։

32 А. Ф. Тург. Рахит, Л., 1966.

ուռի կամ ի տաք է և կամ ի հով է» գլխում. «Ջայիֆի ճիկար. նշանն այն է, որ երեսն գեղին լինայ, բերանն ցամաք լինայ, փորն կապ աւաղ լինայ, Կերուկուր քիչ ուտէ, ղկերածն չի մարսէ, մերձաւորութիւն չուզենայ, ձեռքն և ոտըն պաղ լինայ: Դեղն շարապի սունպուլն է: Առ սունպուլ, տարչինի, դախուլէ, օտի հինտի, ճաւզ մեծ Ա. Ա. (1-ական) դրամ, դարանֆուլ կէս դրամ. ծեծէ և միասին Ե. (5) դեղերուն շաք ջրով եփէ, որ կէսն մնայ, քամէ ջրին շաք մեղրով իզվտա՛ բեր, կէս դրամ զաֆրան վարդէջրով տրորէ, ամէն վաղընէ կէս դգալ խմէ»³³: Ժիշտ է այդ հավելման մեջ Բունիաթի անունը չի նշված, սակայն այն, ի թիվս մյուսների, ամենայն հավանականությամբ, պատկանում է Բունիաթ Սեբաստացուն: Այդ հետևության մեզ հանգեցնում է այն փաստը, որ Մատենադարանի № 414 ձեռագիր-բժշկարանում հիշատակություն կա, որ տվյալ ձեռագրի ստացողը Բունիաթ բժիշկն է: Հետևաբար, բոլոր այլ գրչությամբ հավելումները պետք է, որ արված լինեն խմբագիր Բունիաթ Սեբաստացու կողմից: Բունիաթի այդ հավելումն ուղագրավ է մի այլ առումով ևս. ի տարբերություն մյուսների, որոնք հիմնականում վերաբերում են հիվանդությունների բուժմանը, այստեղ Բունիաթը անդրադարձել է նաև հիվանդության ախտանշանագիտության հարցերին: Տեխնիկապես հնարավորություն չունենալով պահպանել Ամիրդովլաթի բժշկարանի շարադրման, եթե կարելի է այսպես կոչել, կառուցվածքային հաջորդականությունը (1. ախտածնություն, 2. ախտանշանագիտություն, 3. բուժում), Բունիաթն այդ հիվանդության ախտանշանագիտության հավելումը կատարել է բժշկարանի բուժման բաժնում՝ ձեռագրի ազատ մնացած տեղերում, հաճախ նաև լուսանցքներում: Հավելման մի մասը (Ստածումն որ ի տաք է) գրված է ձեռագրի ձախ սյունակի ազատ մնացած մասում, իսկ մյուսը (Ստածումն որ հով է լինայ)՝ տեղի սղության պատճառով աջ սյունակի տակ:

Հարկ է անդրադառնալ նաև հիվանդության ախտածնությանը վերաբերող Բունիաթի խմբագրական ավելացումներին՝ մասնավորապես «Ըսթսիայ, որ է արծուիքն, որ է զմաստն Ե. (5) ցեղ լինայ» գլխում նրա կատարած լրացմանը:

Իր աշխատանքային պրակտիկայում Բունիաթ Սեբաստացին անշուշտ բուժել է նաև այնպիսի հիվանդների, որոնց մոտ մարմնի ընդհանուր այտուցվածությունը (anasarca) կապված է եղել փայծաղի ախտահարման հետ: Նա նկատել է, որ փայծաղի նման ախտահարումը (պնդացած և մեծացած փայծաղ, որը կարող է հասնել նույնիսկ մինչև որովայնի աջ կողմը) առաջանում է նաև սուր տենդային հիվանդությունների՝ առանձնապես մալարիայի ժամանակ (այլ կերպ չպետք է հասկանալ. «Եւ այս ցաւս ի հաւառտ երկիրն շատ լինի և ի ծովեզերին...» տողերը): Նրա մոտ շատ բնորոշ է նկարագրված այդ հիվանդների արտաքին տեսքը (habitus). «...Փայծեղն ուռի և յսնք երբայ մեծնայ և ի ձախէն ի յաջ դիհն անցնի և գայ մէկ տեղ կցի և շլիքն բարկնայ և երակն լարի և կաշին սկնայ և մեռնի»³⁴: Եվ իսկապես, մալարիայի երկարատև ու ծանր ընթացքների դեպքում (երբ նոպաները կրկնվում են շատ հաճախ) հիվանդը ծայր աստիճան հյուծվում է (cachexia), շեղվում են փայծաղի և լյարդի նորմալ կենսաբանական պրոցեսները, առաջանում է մարմնի ընդհա-

³³ Ձեռ. № 414, Թ. 316ա:

³⁴ Ձեռ. № 414, Թ. 317բ:

նուր այտուցվածություն և ուժազրկություն: Ի լրացումն Ամիրդովլաթի առաջարկած բազմաթիվ բուժամիջոցների, այդ հիվանդության բուժման համար Բունիաթը առաջարկում է տարբեր բանջարեղենների և մրգերի զուգորդումներին՝ կազմված դեղապատրաստուկ: «Շարապի, որ յանկարծակի մարդն ուռի ի տաքէ. և թէ մեծ և թէ փոքր մարդ. և մենք շատ փորձեցաք և շատ օգտութիւն գտաք: Եւ տուր շարապի ուսուլն. ամէն սթսխային օգտէ, և առաւել, որ ի փափոյնէն լինայ: Կերպն այս է. — առ քարավիզին քոքին կեղեն և. (30)՝ դրամ, հնդուպային քոքին կեղեն և. (20) դրամ, քապարային քոքին կեղեն և. (15) դրամ, ըռադիանային հունդն և. (20) դրամ, հնդուպային հունդն և. (30) դրամ, քարավիզին հունդն և. (20) դրամ, իթխիր և. (10) դրամ, թուզ և. (10) հատ, չամիչ և. (20) դրամ, ջրով թրջէ Ա. (1) օր և Ա. (1) գիշեր, և թէ հիւանդն տաքութիւն ունենայ և ծարաւ՝ քացախ խառնէ Ա. (1) գաւաթ և եփէ, որ իրեքէն մէկն մնայ և քամէ կտաւով և պարզէ. և առ շաքար կամ մեղր և. (500) դրամ և իղվամ բեր, և առ աման և պահէ, և տուր և. (15) դրամ. կամ և. (20) դրամ՝ և. (40) դրամ տաք ջրով քանի մ անգամ, որ բանայ զերան, և ապա դեղով ստածէ և հնդուպէին քոքին կեղեն ջուրը շատ օգտէ և դուռեցն կու տանի»³⁵:

Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության կնոյ միգա-սեռական օրգանների ախտահարումներին նվիրված բաժինը թերևս ամենալիարժեքն է հայ միջնադարյան բժշկագիտության մեջ: Բժշկարանում i 1 դուրս նվիրված է գինեկոլոգիական հիվանդությունների նկարագրությանը, երկու գլուխ մանկաբարձական ախտաբանությանը և երկու գլուխ՝ հետ-ծննդաբանական շրջանում կրծքագեղձերի հիվանդություններին: Ամիրդովլաթի աշխատության մեջ խոսվում է նաև դաշտանային ցիկլի խանգարումների, արգանդի լորձաթաղանթի բորբոքային պրոցեսների, նորագոյացությունների. սրգանդի պոլիպի և արտանկման, չբերության տարբեր սլառճառների մասին³⁶: Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում հմուտ մանկաբարձների կողմից կատարվել է պտղաշրջում և պտղահատում: Այս մանկաբարձական բավական բարդ վիրահատումները կատարվել են մասնագիտացված մանկաբարձ վիրաբույժների կողմից³⁷: «Օգուտ բժշկութեան» երկասիրության ներքին հիվանդությունների բուժման այս բաժնում ևս Բունիաթ Սեբաստացին ունի ավելացումներ: Նրա կողմից առաջարկվում են թե՛ արտաքին և թե՛ ներքին օգտագործման դեղամիջոցներ՝ տարբեր բույսերից և ձեթերից պատրաստված թրջոցներ՝ ձգձղվող ծննդաբերությունների, արյունահոսությունների և արգանդի տարբեր ախտահարումների ժամանակ: Արգանդի պոլիպի ժամանակ նա խորհուրդ է տալիս օգտագործել այս դեղամիջոցը. «Որ ուռի և ցաւի,

³⁵ Ձեռ. № 414, Թ. 317ա:

³⁶ Ի դեպ. պրոֆ. Գ. Հարությունյանը, ուսումնասիրելով միջնադարյան հարուստ բժշկական ձեռագրական աղբյուրները, եկել է այն եզրակացության, որ սեռական օրգանների տարբեր բնույթի ախտահարումների ախտորոշման համար հայ բժիշկները բացի արտաքին քննությունից, կատարել են նաև կնոջ ներքին զննում, որովհետև միայն այդ եղանակով նրանք կարող էին ախտորոշել չգարգացած արգանդը, նրա նորմալ դիրքի շեղումները, նորագոյացությունները, ինչպես նաև արգանդի սուր և խրոնիկական բորբոքային փոփոխությունները (Դ. Դ. Арутюнян, Гинекология и акушерство в Армении в древние и средние века, Ереван, 1974, стр. 200):

³⁷ Նույն տեղում, էջ 166—181:

դու առ քթան լաթ, ֆիթիլ արայ, թաց ի հաւկիթ լոսպիթաքուցով, հետո վարդի ձեթով, վերուր ԳԴ յետ. օգտէ Առտուծով ամէն, քորձած է»³⁸, Արգանդի արտանկման ժամանակ հետեւյալ դեղամիջոցը. «Իպն ասէ, թէ արգանդն ի դուրս գայ և ուրի՝ առ զեղիճին զթաթայ տերէն ծեծէ և ի վերան դիր, կու տանի ի ներս»³⁹, Ամենայն հավանականութեամբ, Բունիաթը «Իպն» ասելով նկատի ունի XIII դ. խոշոր գիտնական Իբն-Բեյտարին, որին ժամանակակիցները համարել են Արևելքի ամենամեծ բուսաբանը, Համենայն դեպս, միջնադարյան հաւ բժիշկներն այդպես էին կոչում Իբն-Բեյտարին⁴⁰:

Օտար լեզուների իմացութիւնը Բունիաթ Սեբաստացուն հնարավորութիւն է տվել օգտվելու միջնադարյան մի շարք խոշոր բժիշկ-բնագետների երկերից և հարկ եղած դեպքում Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» աշխատութեան մեջ լրացումներ կատարելու այդ հեղինակներից⁴¹: «Օգուտ բժշկութեան» աշխատութիւնը խմբագրելիս Բունիաթը կատարել է նաև մի շարք զուտ աղբյուրագիտական ճշգրտումներ. մասնավորապես նա նշել է տարբեր ախտահարումների բուժման ձևերի հեղինակների անունները, որոնք չկան Ամիրդովլաթի բժշկարանում: Այդպիսի դեպքերում Բունիաթը բուժման ձևերի նկարագրման սկզբում ավելացնում է հեղինակի անունը՝ «Իպն ասէ», «Սա-հակ ասէ...», «Գեղիանոս ասէ...», «Դիոսկորիտոս ասէ...» և այլն:

«Օգուտ բժշկութեան» աշխատութեան մեջ արված հավելումներից բացի, Բունիաթի լուսանցագիր լրացումները առկա են նաև Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ» դեղաբառարանի Բունիաթին պատկանող ձեռագրի մեջ, ձիշտ է, այդ հավելումներն ավելի սակավ են, բայց դրանք նույնպես ունեն իրենց որոշակի գիտական արժեքն ու գալիս են վկայելու Բունիաթ Սեբաստացու իմացութիւնները դեղագիտութեան բնագավառում: Այդպիսի լուսանցագրութիւններ կան «Անգիտաց անպէտի», «Արդիս», «Դեղձ», «Զաձ», «Լուֆ», «Մուշք», «Մըծումն» դեղամիջոցների նկարագրութիւններում: Իսկ դեղաբառարանի 681 և 2607 թվահամարների դեղատոմսերի հեղինակը Բունիաթ Սեբաստացին է («Զայս անարժան Բունիաթս գրեցի»):

«Անգիտաց անպէտում» Բունիաթի կատարած հավելումները 1929 թ. նկատել է Կ. Բասմաջյանը⁴² ու հենց Ամիրդովլաթի դեղաբառարանի Բունիաթի լրացումներով ձեռագիր օրինակն էլ (որը պատկանել է Բասմաջյանին) հիմք հանդիսացավ այդ մեծարժեք աշխատութեան բնագրի հրատարակութեան: Բունիաթի կատարած նույնատիպ լուսանցագրումներն ու լրացումներն առկա են նաև նրա խմբագրած № 414 ձեռագրի բժշկարանում:

³⁸ Ձեռ. № 414, Թ. 336ա:

³⁹ Ձեռ. № 414, Թ. 337ա:

⁴⁰ Ebn-el-Belthar-ի „Dchami el Mufradat“ ստեղծագործութիւնը արաբական բժշկագիտութեան ամենալիարժեք Materia medica է, որտեղ նկարագրվում են մոտ 2600 բուսատեսակներ և նրանց բուժիչ ազդեցութիւնը (С. Ковнер, История средневековой медицины, вып. I Киев, 1893, էջ 313): Այսպիսի մի դեղաբառարանից օգտվելն արդեն ավելի լիարժեք է դարձրել Բունիաթ Սեբաստացու խմբագրական աշխատանքը:

⁴¹ Այդպիսի լրացումների մենք հանդիպում ենք բժշկարանի «ԼՁ» (Նիսու և ճմուռ, Բ-ն այլ ըղեղին հոսքերն են լինայ), «ՃԲ» (Հազ, որ ի գիճութենէ կամ ի շորութենէ), «ՃԼէ» (Փայ-ծաղնացաւութիւն), «ՃԶԳ» (Որոյ արգանդն ի դուրս գայ), «ՃԶԶ» (Կին, որ դժար ծնանի), «ՄԲ» (Խոզք, որ է խանազիրն), «ՍԺԶ» (Ըսիպ ջերմանն) գլուխների բուժման բաժիններում:

⁴² Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, էջ 2—է:

Բունիաթ Սեբաստացու կողմից Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» և «Անդիտաց անսլէտ» երկասիրությունների խմբագրման բնույթի մասին բերված փաստերը հիմք են տալիս խոսելու Բունիաթ բժշկի խմբագրական աշխատանքների գիտական բարձր մակարդակի մասին, նշելու, որ այդ խմբագրությունը եղել է գիտական և ստեղծագործական, իսկ նրա հավելումները բժշկադիտական ինքնուրույն արժեք են ներկայացնում:

НАУЧНО-РЕДАКТОРСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ БУНИАТА СЕБАСТАЦИ

ДОНАРА КАРАПЕТЯН

Резюме

В первой половине XVII в. Буннатом Себастиан был отредактирован энциклопедический труд выдающегося армянского врача XV в. Амирдовлата Амасиаци «Польза медицины». На основании анализа богатейшего материала рукописных первоисточников, хранящихся в Матенадаране им. Маштоца, удалось выяснить, что в процессе редактирования вышеуказанного труда Бунната Себастиана было сделано множество ценных дополнений. Эти дополнения условно можно разделить на три группы. В первую группу входят дополнения, сделанные самим Буннатом Себастианом и затрагивающие вопросы патогенеза болезней и их лечения, во вторую—дополнения, которые приписываются другим авторам, в третью—источниковедческие уточнения.

Кроме того, Бунпат Себастиан, обладая обширными медико-биологическими познаниями, сделал также ценные дополнения к труду Амирдовлата Амасиаци по лекарствоведению—«Ненужное для неучей».

Обстоятельное изучение вышеуказанных дополнений, сделанных Буннатом Себастианом к трудам Амирдовлата Амасиаци, позволяет говорить о высоком научном уровне его редакторской деятельности.